ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/19

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.01.2020թ. թիվ 26/26-1/527-2020 գրությամբ «Կանտասուվ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 14.01.2020թ. թիվ ՊՆ/02/64-2020 գրության հիման վրա, 17.01.2020թ. թիվ 26/26-1/527-2020 նախաձեռնել է «Կանտասուվ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Կանտասուվ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ Ընկերության կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

«Կանտասուվ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/19 ընթացակարգի շրջանակներում 27.01.2020թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 14.01.2020թ. թիվ ՊՆ/02/64-2020 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Կանտասուվ» ՍՊԸ-ի միջև 01.07.2019թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-3/8-2 գնման պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019թ. դեկտեմբերի 27-ին միակողմանի մասնակի լուծել է N ԳՀԱՊՁԲ-3/8-2 գնման պայմանագիրը:

Պատվիրատուն տեղեկացրել է, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 28.12.2019թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/19 ընթացակարգի շրջանակներում 27.01.2020թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2020/19 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2020/19 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Կանտասուվ» ՍՊԸ-ի միջև 01.07.2019թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-3/8-2» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է պայմանագրով (հետայսու՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը (հետայսու՝ ապրանք), իսկ գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. «Կանտասուվ» ՍՊԸ-ին ուղղված 30.12.2019թ. թիվ ԴՎԱ/5759 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետի 2.1.7.1 ենթակետի «բ» պարբերությունը, Պատվիրատուն 27.12.2019թ. միակողմանի լուծել է Պայմանագիրը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 17.01.2020թ. թիվ 26/26-1/527-2020 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 14.01.2020թ. թիվ ՊՆ/02/64-2020 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Կանտասուվ» ՍՊԸ-ի միջև 01.07.2019թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-3/8-2» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի N 1 հավելված՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 3-րդ չափաբաժնի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է 2019թ. 3-րդ եռամսյակում մատակարարել 1000 հատ «Հայոց բանակի գերազանցիկ» մեդալներ, կրծքանշաններ:

26.11.2019թ. կազված N 2 արձանագրության համաձայն՝ 26.11.2019թ. Ընկերությունը, համաձայն Պայմանագրի, ՀՀ ԶՈՒ ԲՀԱ վարչություն է մատակարարել 1000 հատ «Հայոց բանակի գերազանցիկ» կրծքանշան:

Հանձնաժողովը ստուգման արդյունքում արձանագրել է, որ ներկայացված «Հայոց բանակի գերազանցիկ» թվով 600 հատ կրծքանշանները համապատասխանում են Պայմանագրի N 1 հավելվածով հաստատված տեխնիկական բնութագրի պայմաններին և թույլատրվում է մատակարարումը, իսկ 400 հատ «Հայոց բանակի գերազանցիկ» կրծքանշանները չեն համապատասխանում տեխնիկական բնութագրում նշված պայմաններին. դիմերեսի հենքը պետք է պատված լիներ կարմիր գույնով, սակայն մանուշակագույն էր:

Նույն արձանագրության համաձայն՝ «Հայոց բանակի գերազանցիկ» կրծքանշանի 400 հատը չի համապատասխանում պայմանագրին կից տեխնիկական բնութագրի պայմաններին և հետ են վերադարձվում «Կանտասուվ» ՍՊԸ-ին:

Վերոհիշյալ արձանագրությունը հաստատվել է նաև Ընկերության տնօրենի կողմից:

26.11.2019թ. կազմվել է Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N 4215 բացասական եզրակացությունը, որի համաձայն՝ «Կանտասուվ» ՍՊԸ-ն չի իրականացրել «Հայոց բանակի գերազանցիկ» կրծքանշանների մատակարարումը 400 հատի մասով: Նույն եզրակացության համաձայն՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրում նշված է եղել՝ դիմերեսի հենքը պատված կարմիր գույնի արծիվով, իսկ մատակարարված կրծքանշանների փաստացի զննման ժամանակ պարզվել է, որ մանուշակագույն է:

Առաջարկվել է ապրանքը փոխարինել տեխնիկական բնութագրերին համապատասխան ապրանքով, սակայն այն չի փոխարինվել:

ՀՀ ԶՈՒ ԳՇ օպերատիվ գլխավոր վարչության պետ-ԶՈՒ գլխավոր շտաբի պետի տեղակալին ուղղված 28.11.2019թ. թիվ 1595 գրությամբ ՀՀ ԶՈՒ ԲՀԱ վարչության պետը հայտնել է, որ Ընկերությունը 3-րդ եռամսյակի ընթացքում պետք է մատակարարել 1000

հատ «Հայոց բանակի գերազանցիկ» կրծքանշան, սակայն ներկայացված նմուշը չի համապատասխանել տեխնիկական բնութագրի պահանջներին և «Կանտասուվ» ՍՊԸ-ին առաջարկվել է հնարավորինս սեղմ ժամկետում ներկայացնել «Հայոց բանակի գերազանցիկ» կրծքանշանի նոր նմուշ՝ համաձայնեցման և հաստատման, ինչպես նաև ձեռնարկել մատակարարման գործընթացը, այլապես մինչև 30.10.2019թ. չմատակարարվելու դեպքում, կքննարկվի պայմանագրի միակողմանի լուծման տարբերակը:

Ընկերությունը ներկայացրել է նոր նմուշ, ինչը համապատասխանել է պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրի պահանջներին և առաջարկվել է մինչև 18.11.2019թ. մատակարարել ապրանքը: Սակայն վերջինս նոյեմբերի 26-ին, 56 օր ուշացումով մատակարարել է հաստատված նոր նմուշի 600 հատ ապրանք՝ Պայմանագրով նախատեսված քանակից 400 հատ պակաս:

Հաշվի առնելով 2020թ. ՀՈՒ պատրաստության պլանով նախատեսված միջոցառումներին անձնակազմին «Հայոց բանակի գերազանցիկ» կրծքանշանով ապահովելու անհրաժեշտությունը, ՀՈՒ ԲՀԱ վարչությունը համաձայն Պայմանագրի 2-րդ բաժնի 2.1 կետի 2.1.4 ենթակետի «ա» պարբերությանը՝ ԿԼՄ պահեստ է մուտքագրվել 600 հատ ապրանք, անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել ՀՈՒ ԳՇ ֆինանսական վարչություն՝ հաշվառելու և վճարման գործընթացը կազմակերպելու համար, իսկ 400 հատ կրծքանշանի ընդունման գործընթացը 26.11.2019թ. կասեցվել է:

«Կանտասուվ» ՍՊԸ-ին ուղղված 30.12.2019թ. թիվ ԴՎԱ/5759 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ Ընկերությունը Պայմանագրի համաձայն մինչև 2019թ. 3-րդ եռամսյակի ավարտը պարտավոր էր մատակարարել 1000 հատ կրծքանշան, որից սակայն 400 հատը չի մատակարարել:

Նույն գրության համաձայն՝ Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետի 2.1.7.1 ենթակետի «բ» պարբերությունը, 27.12.2019թ. միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է

պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Նույն կետի 2.1.7.1. ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

<u>բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:</u>

Այսպիսով՝ «Կանտասուվ» ՍՊԸ-ն իր և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 01.07.2019թ. կնքված պայմանագրով ստանձնել է սահմանված կարգով և ժամկետներում՝ մինչև 2019թ. 3-րդ եռամսյակի ավարտը (30.09.2019թ.)., ՀՀ պաշտպանության նախարարությանը 1000 հատ «Հայոց բանակի գերազանցիկ» մեդալներ, կրծքանշաններ մատակարարելու պարտականությունը: Ընկերության կողմից 3-րդ եռամսյակի ավարտից հետո՝ 26.11.2019թ. մատակարարվել է ապրանքից 600 հատ, որն ընդունվել է Պատվիրատուի կողմից, սակայն սահմանված ժամկետում չի մատակարարվել 400 հատ ապրանքը, որի հետևանքով Ընկերությունը Պայմանագրով սահմանված ժամկետը խախտել է ավելի քան 30 օր, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Նման պայմաններում, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.01.2020թ. թիվ 26/26-1/527-2020 գրությամբ «Կանտասուվ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Կանտասուվ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**